

ԵՐԿԻՐ ՄՈԼՈՐԱԿԸ



ԿԿՈՒ Մանկապատանեկան Թերթիկ

ՄԱՅԻՍ Ա - 2024
Թիւ - 17 -



Թիւր պատրաստեց՝
ՓԱԹԻՂ ԳԱՍՏՊԵՆԱՆ-ՎԱՐԴԱՊԵՏՆԱՆ
Նկարազարդեց՝
ՌԱՅՅԻՐ ԲԷՇԵՆՆԱՆ

Մեր մոլորակը հիանալի վայր մըն է, բայց մեր օգնութեան կարիքը ունի՝ բարգաւաճելու համար: Ահա թէ ինչո՞ւ ամէն տարի Ապրիլ 22-ին աւելի քան մէկ միլիառ մարդ կը նշէ (Երկրի օրը):

Տարբեր երկիրներուն մէջ տեղի ունեցող բնակչութեան թիւի աճումը, քաղաքներու սահմաններուն ընդլայնումը, ճամբորդական միջոցներու բազմացումը, ջուրի անխնայ օգտագործումը եւ այլ գործօտները, արդիւնքն են ամէնօրեայ աղետներուն (համաճարակ, երկրաշարժ, հրաբուխի ժայթքում, ջրհեղեղ, հրդեհ, փոթորիկ եւ այլն...):

Անգամ մը եւս կը փաստենք, որ մարդ բնութեան դէմ անգոր է եւ այս հարցերուն միակ լուծումը երկրագունդի վրայ մարդոց բացասական ներգործութիւնը նուազեցնելն է:

Ուրեմն մենք պէտք է հետեւինք այն միջոցներուն, որպէսզի կարենանք պաշտպանել երկիրը եւ գայն դարձնել աւելի երջանիկ ու առողջ ապրելու վայր:

ԾԱՌ ՏՆԿԵԼ

Աշխարհի վրայ տարին մօտաւորապէս 15 միլիառ ծառ կը կտրեն, այնպէս որ օգնենք փոխարինելու այդ կորուստը՝ մեր սեփական ծառը տնկելով:

Ծառերը կը ներծծեն ածխաթթու կազ (CO₂) եւ թթուածին (O₂) կը տարածեն՝ մարդոց առողջ շնչառութեան համար: Անոնք նաեւ ապաստան եւ սնունդ են կենդանիներուն համար, ինչպէս՝ սկիւռներուն ու բուերուն:

Ամռան ջերմաստիճանը նուազեցնելու համար կրնանք օգտուիլ ծառերու շուքէն:



ԼՈՅՍԵՐԸ ԱՆՁԱՏԵԼ

«Արդեօք լոյսը պէ՞տք է վառի, քանի դեռ արեւը ծագած է»:

Ելեկտրականութիւն ունենալու համար պէտք է օգտագործենք բնութեան տարրերը, ինչպէս՝ քամին, ջուրը, արեւը: Անկախ այս բոլորէն, փորձենք պահպանել ելեկտրականութիւնը, օգտագործելով միայն այնքան ինչքան մեզի պէտք է:

ՋՈՐԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿԵԼ

Երկրի վրայ մարդ արարածը ջուրի մէկ տոկոսէն նուազ կրնայ օգտագործել: Օրինակ՝ ատամները խոզանակելու ժամանակ ծորակի ջուրին անջատումը օրական մինչեւ ութ լիթր ջուր կրնայ խնայել:



ՈՐԵՐՁԸ ՏԱՐԱԾԵԼ

Խօսեցէ՛ք ձեր ընկերներուն եւ ընտանիքի անդամներուն հետ, թէ ինչեր կարելի է ընել բնութիւնը խնամելու համար եւ խնդրեցէ՛ք, որ օգնեն ձեզ իրագործելու այդ միջոցները: Որքան շատ գրուցեք մարդոց հետ այդ նիւթին շուրջ, այնքան աւելի լաւ կ'ըլլայ մեր երկրին վիճակը:

Պէտք է միշտ խնամենք երկիրը, որպէսզի երջանիկ ու խաղաղ ապրինք:

Թիւերը գումարէ՛, ապա
ներկէ՛ ճշուած գումարին եւ
գոյնին համաձայն:


Պատասխան 7՝ սեւ
Պատասխան 8՝ սրճագոյն
Պատասխան 9՝ կանաչ
Պատասխան 10՝ դեղին
Պատասխան 11՝ նարնջագոյն
Պատասխան 12՝ կապոյտ



Ներկէ՛ նախասիրած գոյներով:




Նախ ներկէ՛, ետքը կտրէ՛ ու կազմէ՛ այս
գեղեցիկ ծաղիկը:



Խառն գրուած բառերով ճիշդ
նախադասութիւն մը կազմէ՛:
լսէ՛ խօսէ՛ քիչ շատ

(շոտլ Յվմ՝ շոլ տոջ)



ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԱՌԱԿԸ

Օր մը անապատին մէջ երկու ընկերներ կռուեցան եւ մէկը միւսը ապտակեց: Երկրորդը ցաւը զգաց, բայց ոչ մէկ բան ըսաւ, յետոյ աւագին վրայ գրեց. «Այսօր իմ ամենալաւ ընկերս զիս ապտակեց»: Ճամբան շարունակեցին, լին մը գտնելով որոշեցին լողալ: Այն ընկերը, որ ապտակ մը ստացեր էր, խեղդուելէն փրկուեցաւ՝ ապտակող ընկերոջ միջոցով: Երբ ուշքի եկաւ, պատահածը այս անգամ գրեց քարի մը վրայ. «Այսօր ամենալաւ ընկերս իմ կեանքս փրկեց»: Այն ընկերը, որ ապտակեր եւ միեւնոյն ատեն ընկերոջ կեանքը փրկեր էր, հարցուց.

- Երբ քեզ ապտակեցի, դուն աւագին վրայ գրեցիր, իսկ հիմա՝ քարին վրայ: Ինչո՞ւ:

Միւսը պատասխանեց.

- Երբ մեզ կը նեղացնեն, մենք պետք է աւագին վրայ գրենք, որպէսզի քամիները ջնջեն զայն: Իսկ երբ մեզի բարիք ընեն, պետք է քարին վրայ գրենք, որպէսզի ոչ մէկ քամի կարենայ ջնջել բարիքը:





Մանկական գիրքերէն առնուած խօսքեր, որոնք երբեք պետք չէ մոռնանք

«Եթէ աշխարհի վրայ ամեն ինչ անիմաստ է, ուրեմն մենք իմաստաւորենք զանոնք»:

«Ալիսան Զրաշքներու Աշխարհին Մէջ»-(Alice In The Wonderland)

«Կարելորը հաւատալն է: Եթէ հաւատաս՝ ամեն ինչ անպայման շատ լաւ կ'ըլլայ, նոյնիսկ քու ակնկալածէդ շատ աւելի լաւ»:

«Թոմ Սոյերի Արկածները»-(The Adventures Of Tom Sawyer)



ԹՈՒՂԹԻ ՄԱՍԻՆ ՅԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ

- Չինաստանը աշխարհի առաջին պետությունն է, որ սկսավ ձեռքով թուղթ արտադրել: Ասիկա տեղի ունեցավ մեզմե մտաւորապէս 2000 տարի առաջ:
- Թուղթը Եւրոպա հասավ արաբ վաճառականներուն միջոցաւ, որոնք Չինացիներէն սորվեցան այս գաղտնիքը:
- Մէկ թօն թուղթի վերամշակումը կը խնայէ 17 ծառ:
- Աշխարհի վրայ ամենաշատ թուղթ արտադրողները ԱՄՆ (Ամերիկան) եւ Քանատան են:
- Չուգարանի թուղթը առաջին անգամ արտադրուեցաւ 9-րդ դարու վերջերը, Չինաստանի մէջ:
- Ամերիկեան առաջին թղթադրամը գործածուեր է 1690 թուականին:

